**Մաքսային միության անդամ պետությունների մաքսային**

**ծառայությունների միավորված կոլեգիա**

---

# ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2014 թվականի** **թիվ 11/17**

**քաղ. Երեւան**

**Ընդհանուր մաքսային գործընթացների հսկողության շրջանակներում՝ ներառյալ Փաստաթղթերի էլեկտրոնային ձեւերի ձեւաչափերի ալբոմը, Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի եւ Ռուսաստանի ԴՄԾ-ի միջեւ տեղեկատվական փոխգործակցության Տեխնիկական պայմանները հաստատելու մասին**

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել ընդհանուր մաքսային գործընթացների հսկողության շրջանակներում՝ ներառյալ Փաստաթղթերի էլեկտրոնային ձեւերի ձեւաչափերի ալբոմը, Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի եւ Ռուսաստանի ԴՄԾ-ի միջեւ տեղեկատվական փոխգործակցության Տեխնիկական պայմանները, որոնք լրամշակվել են 2013 թվականի դեկտեմբերի 31-ին հաստատված՝ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ Տեղեկությունների փոխանակման տեխնոլոգիայի հաշվառմամբ, որն ապահովում է Մաքսային միության անդամ պետությունների տարածք (տարածքից) տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման եւ արտահանման հաշվառումն ու հսկողությունը:

2. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին (ՏՏՄՎեւՎՎ, Դ.Ա. Ռադիվոնիկ),

Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին (ԱեւՏՏՎ, Դ. Ա. Ժուկենով), Ռուսաստանի ԴՄԾ-ին (ՏՏԳՎ, Ա.Ե. Շաշաեւ, ՏՏՄԿՎ: Ա. Ա. Տիմոֆեեւ)՝ մինչեւ 2014 թվականի սեպտեմբերի 15-ը ապահովել Տեխնիկական պայմաններին եւ Ձեւաչափերի ալբոմին համապատասխան ամբողջ ծավալով տեղեկատվական փոխգործակցություն իրականացնող ծրագրային միջոցների պատրաստությունը

3. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին (ՏՏՄՎեւՎՎ, Դ.Ա. Ռադիվոնիկ), Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին (ԱեւՏՏՎ, Դ. Ա. Ժուկենով), Ռուսաստանի ԴՄԾ-ին (ՏՏԳՎ, Ա.Ե. Շաշաեւ)՝ զեկուցել սույն Որոշման կատարման մասին Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի հերթական նիստում:

| | |
|---|---|
| Նախագահի տեղակալ՝ | Ա.Ֆ. Շպիլեւսկի |
| Նախագահի տեղակալ՝ | Գ.Կ. Ամրին |
| Ռուսաստանի Դաշնության ԴՄԾ-ի ղեկավարի առաջին տեղակալ, Միավորված կոլեգիայի անդամ՝ | Վ. Մ. Մալինին |